ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 21.02.2022թ. N 119/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.03.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանգասարյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «Բառուս Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները: «Բառուս Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և չի ներկայացրել է հայտի ապահովումը և Հավելված N 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում տեղ գտած անհամապատասխանությունը:
-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնման հրավերի 8.11-րդ կետի՝ «Բառուս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Բառուս Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:
2" ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:
3. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.15 կետի «Բառուս Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին, տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյան

Անդամներ՝ Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան